

2213

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՆԻՈՒՋԱ ԴՈՒԽՆԵՋԱԴ ՓԻՐԲԱԶԱՐԻ

ՀԻՆ ՇԻՐԱԶԻ «ԵՐԿՈՒ ՍԶԿԻՑՆԵՐԻ ՄԻՋԵՎ» ՔԱՂԱՔԱՍԱՆ ՈՒ ՆՐԱ ՊԱՅՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՄՊԵԿՏՆԵՐԸ

ԺԸ.00.01- «ճարտարապետություն և ճարտարապետական դիզայն»
մասնագիտությամբ ճարտարապետության բեկնածուի գիտական աստիճանի
հայցման համար ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2017

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
НАЦИОНАЛЬНЫЙ УНИВЕРСИТЕТ АРХИТЕКТУРЫ И СТРОИТЕЛЬСТВА
АРМЕНИИ

ГО.ПННЕЖАД ПИРБАЗАРИ АЛПРЕЗА

ЧАСТЬ ГОРОДА «МЕЖДУ ДВУМЯ МЕЧЕТЯМИ» СТАРОГО ПИРАЗА
И АСПЕКТЫ ЕГО СОХРАНЕНИЯ И СОВРЕМЕННОГО
ИСПОЛЬЗОВАНИЯ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата архитектуры по
специальности 18.00.01- "Архитектура и архитектурный дизайн"

ЕРЕВАН 2017

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՆԻՈՒՋԱ ԴՈԼԻՆԵՋԱԴ ՓԻՐԲԱԶԱՐԻ

ՀԻՆ ՇԻՐԱԶԻ «ԵՐԿՈՒ ՍԶԿԻԹՆԵՐԻ ՄԻՋԵԿ» ԲԱՂԱՔԱՍԱՆ ՈՒ ՆՐԱ ՊԱՐՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ԺԱՆԱԿԱԿԻՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՄԴԵԿՏԵՐԸ

ժԸ.00.01- «Ճարտարապետություն և ճարտարապետական դիզայն»
մասնագիտությամբ ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճանի
հայցման համար առենախտության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2017

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
НАЦИОНАЛЬНЫЙ УНИВЕРСИТЕТ АРХИТЕКТУРЫ И СТРОИТЕЛЬСТВА
АРМЕНИИ

ГОЛШНЕЖАД ПИРБАЗАРИ АЛПРЕЗА

ЧАСТЬ ГОРОДА "МЕЖДУ ДВУМЯ МЕЧЕТЯМИ" СТАРОГО ПИРАЗА
И АСПЕКТЫ ЕГО СОХРАНЕНИЯ И СОВРЕМЕННОГО
ИСПОЛЬЗОВАНИЯ

АВТОРЕФЕРАТ


диссертации на соискание ученой степени кандидата архитектуры по
специальности 18.00.01- "Архитектура и архитектурный дизайн"

ЕРЕВАН 2017

Ատենախոսության քեման հաստատվել է Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր Դ. Գ. Քերթմեյան
Պաշտոնական ընդդիմախոսներ՝ ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր Ա. Յ. Գրիգորյան
ճարտարապետության քեկնածու, դոցենտ Ն. Է. Մխիթարյան


Առաջատար կազմակերպություն՝ «Հայնախագիծ» ՓԲԸ:
Պաշտպանությունը կայանալու է 2018 թ. հունվարի 23-ին, ժամը 14⁰⁰- ին ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանին կից գործող ՀՀ ԲՈՅ-ի 030 "ճարտարապետություն և շինարարություն" մասնագիտական խորհրդում: Հասցեն՝ 0009, ք. Երևան, Տերյան փ., 105:
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՃՀԱՀ-ի գիտական գրադարանում:
Հասցեն՝ 0009, ք. Երևան, Սառի փ., 17/1:
Սեղմագրին կարելի է ծանոթանալ ՃՀԱՀ-ի պաշտոնական կայքում՝ www.nuaca.am:
Սեղմագիրն առաքված է 2017թ. դեկտեմբերի 21-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար
ճարտարապետության քեկնածու, դոցենտ  Ս.Ա.Խոփմասյան

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете архитектуры и строительства

Научный руководитель: доктор архитектуры, профессор Кертмезджян Д.Г.
Официальные оппоненты: доктор архитектуры, профессор Григорян А. А.
кандидат архитектуры, доцент Мхитарян Н.Э.

Ведущая организация: ЗАО "Армпроект"
Защита диссертации состоится 23-го января 2018г. в 14⁰⁰ часов на заседании Специализированного совета 030 – «Архитектура и строительство» ВАК РА, действующего при Национальном университете архитектуры и строительства Армении по адресу: 0009, г. Ереван, ул. Теряна, 105.
С диссертацией можно ознакомиться в научной библиотеке НУАСА по адресу: 0079, г. Ереван, ул. Марра, 17/1.
С авторефератом можно ознакомиться на официальном сайте НУАСА: www.nuaca.am
Автореферат разослан 21-го декабря 2017 г.

Ученый секретарь Специализированного совета:
кандидат архитектуры, доцент  ТОВМАСЯН С.А.



11-22-19

ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսության քեման Հին Շիրազ քաղաքի «Երկու մզկիթների միջև» քաղաքամասի կառուցապատման, դրա պահպանության ու ժամանակակից օգտագործման ասպեկտներն են: Քաղաքամասը հարուստ է պատմական հուշարձաններով, որոնք այսօր քաղաքաշինական, միջավայրային և ճարտարապետական վերակառուցման ու արդիականացման կարիք ունեն:

Թեմայի արդիականությունը: Շիրազ քաղաքի կենտրոնական հատվածը կազմում է Շիրազի կառուցապատման շուրջ 40%-ը: Այն քաղաքի գործարար կյանքի սիրտն է, որտեղ կենտրոնացվել են առևտուրը, հասարակական կյանքը և, մասամբ, նաև արդյունաբերական-արտադրական որոշ համալիրներ: Փաստորեն, Շիրազի կենտրոնի պահպանությունն ունի և՛ տնտեսական նկատառում, և՛ մշակութային անհրաժեշտություն: Շատ տեղերում, ելնելով տարածքային և գործառնական անհրաժեշտությունից, կատարվում են հուշարձանապահպանության խախտումներ, ինչը կառույցների մշակութային և կեղանային խեղաթյուրման պատճառ է դառնում: Այսօր խիստ անհրաժեշտ է Շիրազ քաղաքի կենտրոնի պատմամշակութային կորիզի պահպանությունն ապահովող միջոցառումների մշակումը: Փաստորեն, անհետաձգելի է քաղաքային կենտրոնի փաստագրավերլուծական ուսումնասիրությունը, գոյություն ունեցող կառուցապատման պահպանությունն ու արդիականացումը, լինի՛ կերպարային ճարտարապետական միջավայրի համասեռացման, տեխնիկական և գեղագիտական խնդիրների կարգավորման, թե այլ տեսակետներից:

Պատմամշակութային արժեք ներկայացնող հուշարձանների կոնսերվացման ու պահպանության վերոհիշյալ միջոցառումները նոր շունչ կհաղորդեն Շիրազի պատմական կենտրոնին, որն իր հերթին պետք է համապատասխանի համաշխարհային ժառանգության և պահպանության որոշումներին, նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ի կոնվենցիաներին և ընդունված պահպանման չափանիշներին: Ատենախոսության արդիականությունը, ըստ էության, վերոհիշյալ միջազգային հռչակագրերի լույսի տակ է հանդես գալիս: Դրանից հետո այն ամրագրվում է Շիրազ քաղաքի պատմական կենտրոնի օպտիմալացմանը հաշվի առնելով նրա զարգացման հեռանկարները:

1960 թ.-ից մինչ մեր օրերը պատմական քաղաքների պահպանման ազգային և միջազգային շարժումների հիմնական շեշտը դրվել է պատմաճարտարապետական հուշարձանների պահպանման սկզբունքների և մեթոդների վրա, որին հաջորդում է հուշարձանների պահպանության ազգային և միջազգային օրենքների ընդունումը և համապատասխան կանոնադրությունների ու կանոնների մշակումը: Պատմական կառույցների կարևորությունը Շիրազի պատմական կենտրոնում կարելի է ընդունել տարբեր տեսանկյուններից, օրինակ, դրանց պատմական նշանակության և արժեքների բնորոշմամբ, որի հիման վրա հնարավոր կլինի առաջարկել դրանց

պահպանմանն ուղղված համապատասխան ռազմավարություն և իրականացման մեխանիզմներ:

Պատմական կառույցների կարևորագույն հատկանիշներից է դրանց շրջակա միջավայրի հետ համահունչ ու ներդաշնակ կապը: Ներկայումս Շիրազ քաղաքի պատմական տարածքների զգալի մասը լիարժեք չի շահագործվում, և սա է պատճառը, որ այսօր այդ տարածքները բարոյապես ոչնչանում են: Ուստի անհրաժեշտություն է առաջանում դրանց պահպանությունը և կոնսերվացումը իրականացնել այնպես, որ միաժամանակ և՛ գործառնական, և՛ հորինվածքային առումներով դրանք ներգրավվեն քաղաքի ներքին կյանքում: Անվիճելի է, որ անօգտագործելի դարձած ազգային առկա հարստությունը կյանքի կոչելու կարիք ունի: Սակայն վերականգնման ու հետագա պահպանության միջոցառումների համար մեծ ֆինանսական ներդրումներ են պահանջվում: Այդ ներդրումները կարելի է ստեղծել ինքնաֆինանսավորման եղանակով, որը և կդառնա տվյալ բնակավայրի թանգարանացման և զբոսաշրջության զարգացման հետևանքը: Շիրազ քաղաքի պատմական հատվածը զբոսաշրջության ռեսուրս է՝ իր բոլոր տվյալներով: Նման միջոցառումը այսօր անհետացումից կփրկի ազգագրական և ճարտարապետական արժեքներ բովանդակող բնակավայրը: Փաստորեն, տարածքի զբոսաշրջության ծրագրերի ենթատեքստում միանգամայն անհրաժեշտ է պատմական բնակավայրի պահպանությունը, վերաօգտագործումը և թանգարանացումը՝ իր բոլոր ճարտարապետական և քաղաքաշինական միջոցառումներով:

Շիրազի պատմամշակութային հատվածի պահպանումը, բացի թանգարանացումից, բազմապրոֆիլ ծրագիր է, որում իրենց տեղն են գտնում պատմահնագիտական, ազգագրական, ժողովրդական բնակելի ճարտարապետության, պատմական քաղաքաշինության, միջավայրի գեղագիտական կազմակերպման ու նորովի օգտագործման, զբոսաշրջության և այլ մասնագիտական ոլորտները: Հենց այս առումով էլ բնակավայրի ճարտարապետական ուսումնասիրությունն ու պահպանությունն այսօր անհետաձգելի անհրաժեշտություն է:

Ուսումնասիրության նպատակը Շիրազ քաղաքի պատմական կենտրոնի «Բեյուլ Հարամեյն» քաղաքամասի ուսումնասիրությունը, պահպանությունը և ռեվիտալիզացիան է, այսինքն՝ կենտրոնի քաղաքաշինական և ճարտարապետական համալիր վերակառուցումը հաշվի առնելով տարբեր ժամանակներում կառուցապատված միջավայրի ֆուկցիոնալ պահանջները:

Ուսումնասիրության գիտական խնդիրներն են.

1. Շիրազի քաղաքաշինական կառուցվածքն ու նրա զարգացման պարբերացումը: Քննարկելով համապատասխան ժամանակաշրջանները՝ ներկայացնել այդ ժամանակաշրջանների պատմական ակնարկը, որն ընդգրկում է քաղաքի արձատական փոփոխությունները կամ նախատեսում է հատուկ իրադարձություններով տարբերակված քաղաք, որոնք էլ տվյալ ժամանակաշրջանը առանձնացնում են մյուս դարաշրջաններից: Այս եղանակով քաղաքի զարգացումը քննարկելով՝

հնարավոր է դառնում ծանոթանալ այն գործոններին, որոնց ազդեցության հետևանքով պատմական նշված ժամանակաշրջանում քաղաքը փոփոխության է ենթարկվել:

2. Շիրազի պատմական կենտրոնի ձևավորման ուսումնասիրությունը, նրա քաղաքիչներն ու գոտևորման մեկնաբանությունը և պաթոլոգիան:

3. Շիրազի կենտրոնում առկա պատմամշակութային արժեք ներկայացնող շենքերի տիպաբանական դասակարգումը և միջամտության մակարդակների բնորոշումը:

4. Միջամտության մեթոդների դասակարգումը և կիրառումը, ներառյալ ռեվիտալիզացիայի և կոնսերվացիայի գործառույթները իրենց ֆիզիկական և ոչ ֆիզիկական բաղկացուցիչներով հանդերձ: Ընդ որում միջամտություններն ընդգրկում են բոլոր այն գործընթացները, որոնք ներառում են՝ մշակութային ժառանգության արժեքների պահպանումը և ռեվիտալիզացիան:

Ուսումնասիրության մեթոդը: Ատենախոսությունում պատմական հուշարձանները վերլուծվել են ժամանակակակից օգտագործման կտրվածքով և պատմականության մեկնաբանությամբ: Հետազոտությունն իրականացվել է որակական վերլուծության պատմական մեթոդով, ինչպես նաև՝ ժամանակակակից հուշարձանապահպանության օրինակների հետ քաղաքատություններով: Ընդհանուր առմամբ, երկու մեթոդները միահյուսվել են իրենց տրամաբանական փաստարկային սկզբունքներով: Թեմայի մշակման համար իրականացվել են արխիվային, գրադարանային և փաստաթղթերի ու լուսանկարների, նախագծերի պատմամատենագրական ուսումնասիրություններ, ինչպես նաև տեղում դաշտային հետազոտություններ: Այնուհետև կատարվել է թվարկված հետազոտությունների տվյալների ընդհանրացում:

Ուսումնասիրության առարկան ներառում է Շիրազ քաղաքի ճարտարապետական լանդշաֆտը, քաղաքաշինությունը և միջավայրի ուսումնասիրությունը, պահպանումը և ռեվիտալիզացիան, ինչպես նաև պատմամշակութային կառույցների, այդ թվում՝ բնակելի, կրոնական, հանրային, մեմորիալ, առևտրային և արդյունաբերական շինությունների կոնսերվացիան և պահպանությունը:

Ատենախոսության աշխարհագրական և ժամանակագրական սահմանները: Աշխարհագրական տեսակետից ուսումնասիրությունը հիմնականում ընդգրկում է Շիրազ քաղաքը և նրա շրջակայքը: Չուգահեռների անցկացման էքսկուրսներում, ընդգրկվել են միջազգային պահպանման օրինակները՝ Դամասկոսը, Չաբիդը, Վիկյուսը, Ֆեզը և այլն: Աշխատությունում հուշարձանապահպանության լուծումները, տիպարային կարգով ներդրվել են Էսհադ Բեյզ քաղամասի օրինակում, ապա ընդհանրացվել ողջ «Բեյուլ Հարամեյն» քաղաքամասի համար:

Ժամանակագրական առումով ուսումնասիրությունը կենտրոնանում է միջնադարյան ժառանգության ժամանակակից օգտագործման դրույթների վրա: Ընդգրկված մշակութային հարստությունների թվում են՝ *Սաֆիարյանների (861–1003),*

Բուիդների (Ղեյլամյանների) (934–1055), Աթաբեկյանների (Ֆարսի Աթաբեկյաններ կամ Սալդորյաններ. 1148–1282/7), Թեյմուրյանների (1370–1506), Սեֆյանների (1501–1722), Ջանդիների (1750–1794), Քաջարների (1789–1925) ժամանակաշրջանները: Որպես մինչ իսլամական շրջանի ծանոթություն՝ ընդգրկվել են *Աբեմենյան (մ.թ.ա. 550–330) և Սասանյան (224–651) ժամանակաշրջանները:*

Ուսումնասիրության գիտական նորույթը:

1. Հիմք ընդունելով գիտահետազոտական և նախագծային դրույթները առաջին անգամ ատենախոսության մեջ մեթոդականորեն փաստագրվել և վերլուծվել է Շիրազ քաղաքի պատմական կենտրոնի կառուցապատումը:

2. Առաջին անգամ ցուցակագրվել և համակարգվել են բոլոր հուշարձանները, ձևակերպվել են դրանց պաթոլոգիան, պահպանության ակտերն ու ռեվիտալիզացիայի միջոցառումները: Կատարվել է գոյություն ունեցող հուշարձանների փաստաթղթավորում:

3. Կատարվել է պատմական և աշխարհագրական պայմանների ընդհանուր հետազոտություն, լանդշաֆտի և քաղաքային հատակագծի առանձնահատկությունների ուսումնասիրություն:

4. Առաջադրվել են ռեվիտալիզացիայի և միջամտության փուլերի վերաբերյալ որոշումներ կայացնելու չափորոշիչներ:

5. Առաջին անգամ իրականացվել է Շիրազ քաղաքի պատմական կենտրոնի հուշարձանների վերաբերյալ միջամտության եզրակացության կազմում ու իրագործում:

Ատենախոսությունը պաշտպանության է ներկայացնում Շիրազ քաղաքի պատմական կենտրոնի «Բեյնոլ Հարամեյն» քաղաքամասի վերակառուցման անհրաժեշտությունը և՛ քաղաքաշինական, և՛ ճարտարապետական, և՛ տեխնիկական, և՛ ազգագրական ու հնագիտական առումներով:

Ատենախոսության գործնական նշանակությունը:

Ներկայացվող ուսումնասիրությունն անհրաժեշտ է Շիրազ քաղաքով զբաղվող պետական և մասնավոր ոլորտների, ինչպես նաև՝ թեմայով զբաղվող հետազոտողների համար: Ուսումնասիրության արդյունքները հնարավոր է ներդնել նորմավորման և օրենսդրական բնագավառներում, նախագծման գործընթացներում, ինչպես նաև ճարտարապետության տեսության և պատմության, հուշարձանների վերականգնման գործառույթներում:

Աշխատանքի փորձահավանությունը:

Աշխատանքի հիմնական դրույթները քննարկվել են ՀՀՀԱՀ-ի ճարտարապետության տեսության, պատմաճարտարապետական ժառանգության վերականգնման ու վերակառուցման, գեղեցիկ արվեստի և պատմության ամփոփում 2016, 2017թթ.:

Հրատարակումներ: Ատենախոսության թեմայով հրատարակված է 10 գիտական հոդված և 4 մենագրություն:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է 137 էջ տեքստային մասից, այդ թվում՝ նախաբանից, երեք գլխից՝ ամեն գլխի վերաբերյալ տրված համապատասխան եզրակացություններից, ընդհանուր եզրակացություններից, տվյալ թեմայի հետ կապված 145 անուն օգտագործված գրականության ցանկից և 38 էջ հավելվածից՝ բաղկացած գծագրերից, աղյուսակներից, քարտեզներից, սխեմաներից և լուսանկարներից:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՂԱԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում տրվել են աշխատանքի արդիականությունը, նպատակը, խնդիրները, հետազոտման մեթոդիկան, գիտական նորույթը, գործնական նշանակությունը, հրատարակումները, ատենախոսության կառուցվածքն ու ծավալը:

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԾԻՐԱԶ ՔԱՂԱՔԻ ԵՎ ՆՐԱ ՏԱՐԱԾՔԻ ՈՒ ԿԵՆՏՐՈՆԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Գլխում ուսումնասիրվել են Շիրազ քաղաքի աշխարհագրական տեղակայման, պատմական զարգացման ու քաղաքաշինական առանձնահատկությունները: Շիրազը մեծ կարևորություն ունի Իրանի ողջ պատմական զարգացման համատեքստում: Պատմության ընթացքում այն ենթարկվել է փոփոխությունների և միջոցառումների, որոնք զգալի ազդեցություն են ունեցել վերջինիս ուրբանիզացման վրա: Այն պատմական փուլերով զարգացած բնակավայր է:

Շիրազը տարածաշրջանային նախաձեռնությունների շրջապատի մասն է կազմում, որոնք տարածվում են ամբողջ քաղաքով և նրա հին պատմական կենտրոնով մեկ՝ ներառելով Ֆոհանդեզի (հին ամրոց, դեժ) ամրոցը՝ ջրհորի (չահ) հետ միասին, որոնք համարվում են Իրանի Աբեմենյան ժամանակաշրջանի խոշորագույն և արժեքավոր կառույցներից մեկը՝ հիմնադրված քաղաքի հարավ-արևելքում: Փաստորեն, հարթավայրում ծավալված բնակավայրն ուրբանիզացվել է ամրոցի բարձունքի շուրջը: Հետագայում բնակելի թաղամասերը ծավալվել են «Բեյնոլ Հարամեյնի» քաղաքային կենտրոնի շուրջը: Քաղաքային կենտրոնն այսօր ունի շերտավոր կառուցվածք, որի պարզաբանումը կարելի է գտնել պատմական աշխարհագրության, լանդշաֆտի և մշակույթների զարգացման հանգույցում:

Շիրազ քաղաքի ձևագոյացումը, կառուցապատումն ու ընդլայնումը, ինչպես նաև վերջինիս քաղաքաշինական կառուցվածքն ու նրա զարգացման պարբերացումը տեղի են ունեցել միմյանց հաջորդող տարբեր պատմական, այդ թվում՝ նախաիսլամական և իսլամական դարաշրջաններում: Ներկայիս իսլամական քաղաքի պատմական հատվածը թվագրվում է X-XIX դարերով: Իսլամական քաղաքի

հիմնական պատմական մասը համարվող քաղաքամասն ընկած է երկու նշանավոր սրբավայրերի՝ *Շահ Չերաղի* և *Ասրանեհի* միջև:

Ներկայումս քաղաքի սահմանները ձգվում են դեպի Շիրազի հարթավայրի արևմուտքը: Դիտարկելով Շիրազի աշխարհագրական առանձնահատկություններն ու պատմական զարգացման ընթացքը, հարկ է նշել, որ վերջինիս ազգային ու միջազգային կարգավիճակը դեռևս ամբողջովին քողագերծված չէ:

Ինչպես վկայում են պատմական աղբյուրները իսլամական այս քաղաքի հիմքը դրվել է Օմայան դինաստիայի (661-750) առաջին տիրակալների իշխանության օրոք: Մինչև Սաֆիարյանների (861-1003) կառավարման դարաշրջանը, քաղաքը ներառել է Դարոլ Էմարեն (իշխանական կենտրոն), մի քանի մզկիթներ և շուկան: Քաղաքի գլխավոր՝ Ջամե Աթիլ մզկիթը, որը գտնվում է քաղաքի կենտրոնում, կառուցվել է Ամրո Լեյս (879-901) Սաֆիարյան տիրակալի օրոք: Ներկայումս էլ, վերոնշյալ մզկիթը համարվում է պատմական քաղաքի հիմնական միջուկը: Ջամե Աթիլ մզկիթը, շուկան, կենտրոնական հրապարակը, բնակելի թաղամասերը կազմել են քաղաքի նախնական կառուցվածքը:

Քուիդների (Դեյլամյաններ) կառավարման տարիներին (934-1055), երբ Շիրազը դառնում է մայրաքաղաք, դրա շուրջը պարիսպներ են կառուցվում: Ազադողղոլեհ Ֆանա Խոսրով Դեյլամիի (949-983) օրոք կառուցվում են ջրանցքներ, ամրաբերակներ, վերակառուցվում է ոռոգման համակարգը, կառուցվում են առևտրական ճանապարհներ, քարվանսատներ, հոյակերտ պալատ, գրադարան և այլն: Նրա օրոք ութը դարպասամուտքերը կապում էին քաղաքը հարակից շրջանների հետ: Բնակչության թվաքանակի աճին զուգընթաց, բազում շենքեր ու շինություններ են կառուցվում և Շիրազն էապես ընդլայնվում է: Այնուհետև Աթաբեկյանների (Ֆարսի Աթաբեկյաններ կամ Սալդորյաններ. 1148-1287) գահակալության ժամանակաշրջանում քաղաքը վերակառուցվում է և կրկին ամուր պարսպապատ է կառուցվում դրա շուրջը, իսկ դարպասամուտքերի թիվը հասնում է իննի: Շիրազի քաղաքային միջավայրում առանձնահատուկ տեղ է գրավում 12-րդ դարում կառուցված Շահ Չերաղի սրբավայրը:

14-րդ դարի կեսերին Ինջուների դինաստիայի (1335-1356) օրոք ամրացվում է Շիրազ քաղաքը շրջապատող պարսպապատը: Թեյմուրյանների (1370-1506) օրոք քաղաքը պահպանում է իր պաշտպանական պարսպապատը: Ժամանակաշրջանին վերագրվող կառույցների թվում են Ամիր Շեյխ Աբու Էսհադի (1342-1357) նոր պալատը, Մանսուրիեն դպրոցը (1478), Սաադի ու Հաֆեզի դամբարանները:

Սեֆյանների դինաստիայի (1501-1722) կառավարման տարիներին Շիրազը դառնում է բարեկեցիկ, հարուստ ու բազմամարդ քաղաք: Կառուցվում են պալատներ, շուկա, դպրոց, հրապարակ, գեղազարդ շինություններ, այդ թվում՝ սալիկապատ զմբեթով շքեղ մի կառույց՝ Իմամ Սեյեդ Ալադդին Հոսսեյնին (Ասրանեհի սրբավայրը) և այլն: Վերջիններիս օրոք քաղաքի դարպասամուտքերի թիվը հասնում է տասնի, որն այդպես էլ մնում է մինչև Ջանդիների գահակալության ժամանակաշրջանը: Սեֆյանների գահակալության ժամանակաշրջանում քաղաքը

մեծապես ընդլայնվում է, և հատկապես դեպի հյուսիս ու հյուսիս-արևելք: Հետևաբար, քաղաքի պատմական կենտրոնը նույնպես ձգվում է դեպի հյուսիս:

18-րդ դարի սկզբներին Շիրազը սկսում է բարեկարգվել Ջանդիների դինաստիական կառավարության ժամանակաշրջանում (1750-1794), երբ այն վերածվում է մայրաքաղաքի (1762): Շիրազում կառուցված բազում շինությունները, որոնցից մի մասը պահպանվել է առ այսօր, վերագրվում են Քյարիմ Խան Ջանդիին (1751-1779): Քաղաքի շուրջը փորվում են խորը պաշտպանական խանդակներ, կառուցվում են բարձր պարիսպներ: Պարսպապատերի պարագիծը նախկինում եղածի համեմատ որոշ չափով կրճատվում է, և արդյունքում, քաղաքի որոշ հատվածներ մնում են պարիսպից դուրս: Քյարիմ Խանը կառուցում է արքայական քաղամաս և բազմաթիվ շինություններ, որոնց թվում են միջնաբերդը, բաղնիքը, մզկիթը, դիվանխանեն (վարչական կենտրոն), հրապարակը, դպրոցը, շուկան, որը կցված էր քաղաքամաստանը, թագավորական այգին և այլն: Վերջինիս կողմից ձեռնարկված միջոցառումների թվում է նաև Շիրազի թաղամասերի կրճատումը, որոնք 19-ից վերածվում են 11-ի: Դարպասամուտքերի թիվը նույնպես նվազում է: Նշյալ ժամանակահատվածում քաղաքային հատվածներն արագորեն տարածվում էին դեպի Շիրազի հարթավայրի հյուսիսը և հյուսիս-արևելքը:

Շիրազի զարգացումը Քաջարական կառավարող շրջանակների օրոք (1785-1925) անսկստ էր: Ջանդիների ժամանակաշրջանի հետ համեմատ: Ամբողջ երկրում իշխող քառույթ և մայրաքաղաքի տեղափոխումը Թեհրան՝ դառնում է Շիրազի մոռացության պատճառը: Քաջարական ժամանակահատվածում կառուցված հոյակերտ շինությունների թվում են Նասիր-Ալ-Մուլք համալիրը (Նասիր-ալ-Մուլք մզկիթը, Նասիր-ալ-Մուլք տունը), Ղավամ Հոսսեյնիեղ, Հասանի Արդաբանի տունը, Մոշիր-Ալ-Մուլք համալիրը (մզկիթ, Հոսսեյնիեն՝ շիաների կրոնական արարողությունների հավաքատեղի), Ղավամ-ալ-Մուլքը (Ղավամ թթու նարնջի այգու մեջ տեղակայված շինությունը, Ջինաթ-ալ-Մուլք տունը) և այլն: Քաջարների ժամանակաշրջանում Շիրազը, այնուհանդերձ, շարունակում է մնալ ամենակարևոր նահանգային քաղաքներից մեկը: Այն բաղկացած էր տասնմեկ հստակ թաղամասերից, որոնք բնակեցված էին հզոր սոցիալական համայնքավածություն ունեցող տարբեր համայնքերով: Այս ժամանակաշրջանում կառուցված այգիները, շինություններն ու բնակավայրերն ակնառու են քաղաքի ներկայիս համալիրում: Այսպիսով, քաղաքի կառուցվածքի ձևավորումը շարունակվում է մինչև Քաջարական ժամանակաշրջանի ավարտը, առանց ընդլայնման և պարսպապատման, և դարպասամուտքերը մնում են անփոփոխ: Քաղաքի պատմական հատվածը մինչև Քաջարների դինաստիական կառավարության վերջը պահպանվում է այնպես, ինչպես վերջիններիս նախորդների Ջանդիների օրոք էր:

Շիրազի վերափոխումը սկսվում է 1925-ից հետո, Ռեզա շանի (1925-1941) Փահլավիների դինաստիայի (1925-1979) հիմնադրի փորձերի շնորհիվ: Արդիականացման առաջին ժամանակահատվածից հետո նախկինի համեմատ Շիրազի աճն ու զարգացումն արմատապես տարբերվում է: Փողոցների, ինչպիսին է

օրինակ՝ Ջանդ պողոտայի կտրուկ զարգացումը և կառուցապատումը անհամաչափություն է ստեղծում քաղաքի պատմական կառուցվածքում, քաղաքի սահմանները դուրս են գալիս մի ժամանակ գոյություն ունեցող պարիսպների շրջանակներից: Փահլավիների դինաստիական իշխանության երկրորդ դարաշրջանից (1941-1979) ի վեր խնդիրներ են ծագում կապված քաղաքային զարգացման համակարգի հետ՝ նոր քաղաքի արդի շինությունների վերաբերյալ: Մոցիալական կառուցվածքի փոփոխության պատճառով քաղաքային պաշտոնյաները քիչ ուշադրություն են դարձնում մատուցվող ծառայություններին, որի հետևանքով պատմական հուշարձաններն աստիճանաբար կորցնում են իրենց նախկին տեսքը:

Այսպիսով, Շիրազի պատմական կենտրոնն ընդլայնվել է աստիճանաբար: Քաղաքի նախնական միջուկը, ոչ միայն նախախլամական և հետխլամական ժամանակաշրջաններում, այլ նաև այսօր, ունի նույն սահմանները՝ տեղակայված լինելով Էսհադ Բեյք թաղամասի հարավային հատվածում:

ԳԼՈՒԽ 2. ԵՐԿԱԶ ՔԱՂԱՔԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄԸ ԵՎ ԳԼԽԱՎՈՐ ՀՈՒՇԱՐՉԱՆՆԵՐԸ

Գլխում ներկայացվում են Շիրազ քաղաքի պատմական կենտրոնի կառուցապատման փուլերն ու տարածքի գլխավոր հուշարձանները:

Շիրազ քաղաքն ունի դասական կառուցվածք, որի հիմնական տարրերն են ամրոցը, բերդարաղարը, դարպասները, գլխավոր փողոցը, կենտրոնական հրապարակը, Ջամե Աթիդ մզկիթը, շուկան, քարավանատունն ու ոռոգաթը, բնակելի տները, թաղամասերը և պալատական հատվածը: Քաղաքի կառուցվածքի նախնական միջուկը ձևավորվել է Ջամե Աթիդ մզկիթի շուրջը: Սկզբնականում քաղաքում բացակայել է պարիսպը: Ջամե Աթիդ մզկիթը, շուկան, կենտրոնական հրապարակը, բնակելի թաղամասերը կազմել են քաղաքի նախնական կառուցվածքը: Հետագայում շրջակայքում կառուցվել են այլ շինություններ, այդ թվում՝ դպրոցներ, ոռոգաթներ և այլն: Պարսպապատված քաղաքը բաղկացած է տարբեր հրապարակներից, մասնագիտացված շուկաները տանող անցումներից (ռասթեն): Թաղամասերը դասավորված են շուկաների շուրջը:

Քաղաքի կենտրոնական պատմական հատվածն ընդգրկում է 33 հա, որի հիմնական մասը գտնվում է *Էսհադ Բեյք* թաղամասում: Այն սահմանագիծ է հյուսիսում Լոթֆ Ալի Խան Ջանդիի պողոտային, հարավում՝ Բեյնոլ Հարամեյնի տարածքին, արևմուտքում՝ Շահ Չերաղին և արևելքում՝ Ասբանեհին (Մեյլեդ Ալադդիևի դամբարանին):

Նասիր-ալ-Մոլլը, Բայաթը, Երկուշաբթի օրվա մզկիթը, Մանսուրիեն, Հաջի շուկան, Ասբանեհ Բանդը այս սահմանված տարածքի վեցը հիմնական փողոցների

գլխավոր համալիրներն են: Սրանցից չորսն ունեն հյուսիս-հարավ ուղղություն, իսկ երկուսը՝ արևելք-արևմուտք: Սահմանված տարածքի ներսում կա երեք փոքր հրապարակ, որոնք գտնվում են Ջամե Աթիդ մզկիթի գլխավոր մուտքի հակառակ կողմում, Ջամե Աթիդի հարավային հատվածում և համապատասխանաբար՝ Նասիր-ալ-Մոլլ մզկիթի դիմաց:

Քաղաքի պաշտպանական պարիսպը և դարպասները: Շիրազն ի սկզբանե պարիսպ չի ունեցել: Այն պարսպապատվել է Դեյլամյանների՝ Մամամոդդոլեհ Բա-Քալիջարի (983-987) թագավորության ժամանակաշրջանում և ունեցել է ութը դարպասամուտք: Հետագայում, Աթաբեկյանների օրոք վերջիններին ավելանում է նա մեկը: Սեֆյանների օրոք քաղաքն ուներ պաշտպանական պարսպապատնեշ, որին կից փորված խորը խանդակը բաժանում էր այն հարակից այգիներից և արվարձաններից: Վերջիններս օրոք առկա էր տասը դարպասամուտք: Սեֆյաններին հաջորդած Քարիմ Խան Ջանդը (1705-1779), թշնամիների կողմից ավերված պարսպապատնեշը վերանորոգում է: Նա որոշում է նվազեցնել քաղաքի սահմանները, որպեսզի ավելացնի հզորությունը՝ այդպիսով հեշտացնելով նաև պարիսպի կառուցումն ու ամրացումը: Քյարիմ Խանը կրճատում է նաև դարպասների թիվը՝ հասցնելով վեցի: Վերջինիս մահվանից և Ջանդիների դինաստիայի անկումից հետո, Ադա Մոհամմադ Խան Քաջարի հրամանով քաղաքի պարիսպն ավերվում է:

Ամրոցը. Ֆոհանդեզի ամրոցի (Ֆահանդեզ, Բանդար, Քոհանդեժ և այլն) հետքերը դեռևս առկա են: Այն գտնվում է Մաադի լեռանցքի արևելյան հատվածում: Քաղաքի մուտքը ի սկզբանե եղել է այս վայրում, որը գտնվում է Ալլահո Աբբար կիրճից առաջ: Ֆոհանդեզի ամրոցն անցյալում Ֆարսի մեծագույն ամրոցներից է եղել, և մինչև Շիրազի՝ որպես քաղաք հիմնվելը կառուցվել է Իրանի Աբեմենյան թագավորների հրամանով:

Շուկաները. Իրանական քաղաքներում (Սպահան, Շիրազ և այլն) հասարակական կյանքի կենտրոնը համարվում է շուկան (բազարը), որի գլխավոր փողոցների խաչմերուկը կոչվում է չարսու: Իրանի պատմական քաղաքներում շուկան քաղաքային կառուցվածքում ունի ինքնատիպ դեր ու նշանակություն: Այն ոչ միայն համարվում է քաղաքի տնտեսական սիրտը, այլև քաղաքի հասարակական, մշակութային ու կրոնական իրադարձությունների կիզակետը:

Դժբախտաբար, Մաֆֆարյանների գահակալության ժամանակաշրջանից հստակ տեղեկություններ չեն պահպանվել քաղաքի շուկայի, ոռոգաթի և քարավանատան մասին, թեև որոշ պատմիչներ արձանագրում են, որ Մեծ շուկան (Բազարե Բոզորգ), որը սկսվել է Աթիդ մզկիթի հյուսիսային դռնից (կոչվել է Հասսանի դուռ) կառուցվել է հենց Մաֆֆարյանների օրոք: Բուիդների (Դեյլամյաններ) օրոք կառուցվել է Շիրազի ամենահին շուկաներից մեկը՝ Մորդ բազարը (թոչնի շուկա), ինչպես նաև Ադա շուկան, որը 1971թ. Շահ Չերաղի դամբարանի հարակից տարածքում գտնվող Մոշարաֆ հրապարակը կառուցելու նպատակով քանդվել է: Աթաբեկյանների օրոք կառուցվել են մի շարք շուկաներ, որոնք անվանվել են Աթաբեկյան քառանկյուն շուկաներ, որոնցից սակայն ոչ մի հետք չի պահպանվել:

Սեֆյանների դարաշրջանում Շիրագում հիմնադրվել է Դավուդ Խանի շուկան, որը հավանաբար, գտնվել է ներկայիս Պղնձագործների շուկայի տեղում: Շիրագ քաղաքում շուկաների ընդլայնումն իր գագաթնակետին է հասնում Ջանդիների օրոք: Հիմնվում է Վաքիլի շուկան, որն Իրանի պատմական ամենաշքեղ ու ամենագեղեցիկ շուկաներից մեկն է: Ունենալով տարբեր բաժիններ ու քարավանատներ, վերջինս Իրանի ճարտարապետության գլուխգործոցներից մեկն է համարվում և գտնվում է Վաքիլի մզկիթի հարակից տարածքում: Քաջարական ժամանակաշրջանի (1789-1925) շուկաների թվում են Նոր (Նո շուկան), Օրդու և Պղնձագործների շուկաները:

Ռոբաթը կամ քարավանատունը. Քաղաքի կառուցապատման ամենակարևոր բաղկացուցիչներից է նաև ռոբաթը կամ քարավանատունը, որոնք կառուցվում էին և՛ քաղաքից դուրս, և՛ քաղաքի ներսում: Վերջինների վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ են պահպանվել տարբեր դարաշրջաններին վերագրվող իրանական պատմաաշխարհագրական աշխատություններում: Հայտնիների թվում են Աբեշ Խաթունի, Սոնդորի, Աթաղի, Մաջդ Ռումի, Վաքիլի և այլն: Շիրագի լավագույն կառույցների թվում են իջնանատները, որոնցից ամենահայտնին Ղեյսարին է (Սեֆյան դարաշրջան), որը հայտնի է Շահի Բագար անվամբ:

Հրապարակները (մեյդան) և անցումները (ռասթեհ) ևս քաղաքի հիմնական բաղկացուցիչներից են համարվում, որոնց կառուցման ու գտնվելու վայրերի մասին անդրադարձել են պատմաաշխարհագրական աղբյուրներում, օտարազգի ճանապարհորդների հուշանոթերում ու օրագրերում: Հայտնիների թվում են Սաադաթի, Նադարե Խանայի, Թուփխանեի հրապարակները, Շահի մեյդանը և այլն:

Շիրագի այգիները. Իր բնակլիմայական պայմանների բարենպաստությամբ Շիրագը հնուց ի վեր ունեցել է բազմաթիվ հրաշագեղ այգիներ, այդ թվում՝ Ֆիրուզի, Նագարի, Ֆիրդուսի, Ղավամի, Էրամի և այլն: Դրանց շնորհիվ է, որ Շիրագն ստացել է «այգիների քաղաք» անվանումը:

Այսպիսով, ուսումնասիրության ենթարկելով Շիրագ քաղաքի քաղաքաշինական կառուցվածքը, նրա զարգացման պարբերացումը, դիտարկելով միմյանց հաջորդող ժամանակաշրջանների պատմական ակնարկը, ակնհաս է ներ դառնում դարերի ընթացքում տեղի ունեցած արմատական փոփոխություններին, այն է՝ հատուկ իրադարձություններով տարբերակված քաղաքի:

Շիրագ պատմական քաղաքում առկա են բազմաթիվ անգուգական շինություններ, որոնք հանդիսանում են ճարտարապետական և շինարարական գլուխգործոցներ: Քաղաքի պատմական հատվածը տարբեր տիպի շենքերի ամբողջություն է, որը ներառում է բնակելի (Արգ կամ պալատ, ցածրահարկ տներ), առևտրային (խանութ, ռոբաթ, քարավանատուն), կրոնական (մզկիթ, հուսեյնիեհ, թեթե, մեդրեսե), վարչական (դիվանխանե), համայնական (համմամ), հուշարձանային (ուխտատեղի) և այլ կառույցներ:

Շիրագի պատմական հատվածի մզկիթներն և Ջամե Աթիղ, Նասիր-Ալ-Մուք, Հաջ Քյարիմ Սառաֆ, Թահերիեհ, Վաքիլի մզկիթները, Ֆեյլի ու Ղավամ Հոսեյնիները (շիիթական հավաքատեղիներ): Մզկիթների ճարտարապետությունը

տիպաբանորեն պատկանում է բակային կոմպոզիցիային: Դրանց ոճային առանձնահատկությունները համադրում են Սաֆիարյան, Սեֆյան, Քաջարյան և Փահլավիների կառավարման առաջին շրջանի ճարտարապետությանը բնորոշ հատկանիշները:

Ուշարձան է ուսումնասիրվող տարածքի մեմորիալ ճարտարապետությունը, որի նշանավոր դրսևորումները համարվում են դամբարան-սրբավայրերը, այդ թվում՝ Շահ Չերաղի, Մուհամմադ Իբն Մուսսայի, Սեյեդ Ալադդին Հոսսեյնի: Սրբավայրերը (դամբարանները) երկու հիմնական հորինվածքային տիպի են՝ դահլիճատիպ և բակային կոմպոզիցիայով, որոնց ճարտարապետական ոճը Աթաբեկյանների, Սեֆյանների, Փահլավիների կառավարման առաջին և երկրորդ շրջանների ճարտարապետական առանձնահատկությունների համակցությունն է:

Հետաքրքրական են ուսումնասիրվող տարածքի բնակելի ճարտարապետության 32 արժեքավոր օրինակները, որոնք պատկանում են բակային (Թալբան Ֆարդ շինությունը, Ֆաթեմի Քարավանատունը, Հաթիմի իսլամական դպրոցը, Ջալալյան (Արդաբանի) և այլ կառույցները), բոկային (Սառաֆ առաջին տունը), Ս-աձն (Խալիլ Փասանդի տունը, Ֆեյլի 1, 3, 4, տները, Խոդա Մոհամմադի, Ղասաբգաղեհի, Հադիվարաստի, Քամբարի, Թավաստլիի, Ալլահ Մորադի, Մոնթազեթիի, Ռահեմի, Ռոշան Նամայի, և այլ շինությունները), Լ-ձև (Աթրվաշի շինությունը, Սառաֆ 2-րդ կառույցը), գուգահեռ հատվածներով (Ֆեյլի 2-րդ և Ֆոտովվատ-Արաղի պատմական տները) և համակցված տեսակներին (Հասսանի Արդականի տունը, Նասիր-ալ-Մուք շինությունը), գրեթե բոլորն ունեն Քաջարական ոճի ճարտարապետություն:

Պատմական հատվածի արժեքավոր շինությունների թվում են նաև կրոնական դպրոցները (մեդրեսեները), որոնցից հայտնիներն են Խանի, Մոդիմիե, Ֆագարիեհ, Ղարաչեի, Ջահեղիեհ և այլն:

Այսպիսով, քաղաքի կենտրոնական հատվածը կազմում է Շիրագի կառուցապատման շուրջ 40%-ը: Այն քաղաքի գործարար կյանքի սիրտն է, որտեղ կենտրոնացվել են առևտուրը (շուկաներ, ռոբաթներ, քարավանատներ), հասարակական ու մշակութային կյանքը (մզկիթներ, մեդրեսեներ, դիվանխանե և այլն), զբոսաշրջային ուխտավայրերը (ճարտարապետական հուշարձաններ, պատմական կառույցներ, դամբարաններ և այլն), մասամբ, նաև արդյունաբերական-արտադրական որոշ համալիրներ և այլն:

Ինչպես նկատում ենք, Շիրագի կենտրոնի պահպանությունն ունի և՛ տնտեսական նկատառում, և՛ մշակութային անհրաժեշտություն: Հետևաբար, միանգամայն անհրաժեշտ է պատմական բնակավայրի պահպանությունը, վերածոցագործումն ու թանգարանացումը՝ իր բոլոր ճարտարապետական և քաղաքաշինական միջոցառումներով:

**ԳԼՈՒԽ 3. ՇԻՐԱՋ ՔԱՂԱՔԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ
ՊԱԹՈՒՈՒԳԻԱՆ ԵՎ ՌԵՎԻՏԱԼԻԶԱՑԻԱՆ**

Նախորդ գլուխներում համակարգված մասնագիտական տեղեկությունները և ուսումնասիրվող տարածքի ու շենքերի փաստագրության համադրական հետազոտությունը հնարավորություն է տալիս սահմանել նրանց հուշարձանապահպանության պարամետրերը՝ ըստ հաջորդիվ ներկայացվող ռեվիտալիզացիայի, վերականգման կոնվենցիաների ու պաթոլոգիայի կամ ներդրող միջոցառումների կազմակերպչական հերթականության:

Ակնհայտ է, որ Շիրազ քաղաքի պատմական կենտրոնն համաշխարհային նշանակության ճարտարապետական համալիր է: Դրա պահպանումը շատ կարևոր է, ինչը որոշված է իրականացնել ռեվիտալիզացիայի ճանապարհով: Շիրազ քաղաքի պատմական կենտրոնի ձևավորման ուսումնասիրությունը, պահպանությունը և ռեվիտալիզացիան, այսինքն՝ կենտրոնի քաղաքաշինական ու ճարտարապետական համալիր վերակառուցումը անհետաձգելի միջոցառում է, և անհրաժեշտ է հաշվի առնել տարբեր ժամանակներում կառուցված շենքերով կազմակերպված միջավայրի միասնականությունը: Այսօր խիստ անհրաժեշտ է Շիրազ քաղաքի կենտրոնի պատմամշակութային կորիզի պահպանությունն ապահովող միջոցառումների մշակումը: Ըստ էության, միջամտությունը պահպանման այնպիսի տարբեր միջոցների միավորումն է, ինչպիսիք են օրինակ՝ վերականգնումը, ռեզեներացիան, վերաարդիականացումը, վերակառուցումը, և բոլորն էլ ընդգրկված են շրջակա միջավայրի և առանձին շինությունների համար նախատեսված սանդղակում: Փաստորեն, միջավայրային խնդիրները և ճարտարապետական լուծումները շատ կրիտիկական են: Ուստի ուսումնասիրությունը կենտրոնանում է առկա միջավայրի և շենքերի կոմպոզիցիայի պատմական պատկերի ռեվիտալիզացիայի վրա: Սա վերաբերում է մայթերի, տարբեր շենքերի ճակատային մասերի, էլեկտրականության և ուրիշ տեխնոլոգիական միջոցների ջրամատակարարման և այլ քաղաքային ծառայությունների, ավտոկայանման և այլն, պահպանմանն ու վերանորոգմանը:

Տարածքի ռեվիտալիզացիա նշանակում է՝ ստեղծել պատմական մթնոլորտ և դրա պատկերը: Պահպանման հիմնական խնդիրը ներգրավված շինությունների ճարտարապետական ոճերի ուսումնասիրությունն է և դրանց հորինվածքային արժեքների արտացոլումը՝ բովանդակությունը կամ ձևը: Սա կատարվում է հետևյալ քայլերով. 1. ճճի վերանումը կարող է լինել ռոմանտիզմի մոտեցմամբ, այսինքն՝ վերականգնում միջավայրի վերակոչմամբ, ունենալով պահպանման կերպարային սկզբունքներ: 2. Կարծում ենք, տրամաբանական է, որ միջավայրի ռեվիտալիզացիան իր բոլոր բաղադրիչներով պետք է դասակարգվի որոշակի տեսակների: 3. Սահմանված տարածքում ներգրավված հուշարձանների դասակարգումը պետք է ներառի հետևյալ տեսակները. ա. Կարևոր հուշարձաններ, ինչպիսիք են տարբեր մզկիթներն ու սրբավայրերը, կատարելով ռեվիտալիզացիա՝ անաստիլոգի մեթոդով, առանց փոխելու դրանց գործառույթները: բ. Մովորական հուշարձանների

ռեվիտալիզացիա ադապտացման մեթոդով՝ պահպանելով հուշարձանը, սակայն թույլատրելով գործառույթի որոշակի փոփոխություններ: գ. Այլ շինություններ, որոնք կարող են կիրառվել բացարձակապես այլ գործառույթներով և թույլատրվում է դրանք վերակառուցել՝ ֆունկցիոնալ արդիականացման միջոցառումներով: դ. Գոյություն ունեցող միջավայրում ժամանակակից կյանքի նոր ենթակառուցվածքների ավելացում, ինչպիսիք են՝ կայանատեղիները, տեխնոլոգիական լուսավորություն, վերականգնողական տարրերը և այլն: Այստեղ շատ կարևոր է հաշվի առնել գոյություն ունեցող պատմական տարրի և ժամանակակից կառույցի միջև ներդաշնակությունը: Վերոնշյալ բոլոր կետերը պետք է համապատասխանեն պետական օրենսդրության պահպանման մասին կանոններին: Այստեղ տեսությունը ենթադրում է երկու հիմնական մոտեցում: Դրանցից մեկի դեպքում փոփոխություններ են իրականացվում առանձին կառույցում, իսկ մյուս դեպքում՝ կատարվում են փոփոխություններ համալիրի մասշտաբով: Գոյություն ունի նաև մեկ այլ մոտեցում, համաձայն որի փոփոխությունները տեղի են ունենում հավասարապես այս երկու տեսությունների համապատասխան, որը և օգտագործված է այս ուսումնասիրության մեջ: Սա նշանակում է, որ նշված օրենսդրությունը պետք է սահմանափակի ծրագրված փոփոխությունները համապատասխան Շիրազի շրջանի բնական և կլիմայական պայմաններին, ինչպես նաև ճարտարապետական կազմին, հիմնական ուսումնասիրվող տարածքի առանձնահատկություններին, ներառյալ ճարտարապետական հորինվածքային հատկանիշները (ուրվագիծ, շինանյութի տեքստուրա և ֆակտուրա, ձևերի ճկունություն, լույս և ստվեր, գույն), ճարտարապետական հորինվածքային օրինաչափությունները (ձևի հարաբերակցություն և հարաբերություններ, տարբեր տեսակների հողավորումներ մասշտաբ), շինարարական տեխնիկան և վերանորոգումը՝ օգտագործելով նոր կառուցվածքային նյութեր՝ ավանդական շինարարական տարրերի հետ մեկտեղ:

Գլխում քննության են առնվում նաև միջամտությունները: Դրանք հիմնված են մի շարք միջազգային կանոնադրությունների, համաշխարհային պրակտիկայի և տեսությունների վրա: Մշակութային ժառանգության ինքնության անխուսափելի կորստից խուսափելու համար, հավասարապես կարևոր է ուշադրություն դարձնել յուրաքանչյուր քաղաքի պատմական մասի որոշակի հատկանիշներին: Հետևաբար, Շիրազի հին հատվածի վերականգնման համար պատշաճ մեթոդ ընտրելը, օրենքների և նմանատիպ դեպքերի տեսական վերլուծության և քննության անհրաժեշտությանը զուգընթաց, պահանջվում է գնահատել վերլուծության արդյունքների հաջող կիրառման հնարավորությունը Շիրազի ներկայիս կարգավիճակի վերաբերյալ իր բոլոր սահմանափակումներով և ներդրումներով: Այդ կապակցությամբ, ռեվիտալիզացիոն գործառույթները պետք է զարգացնել ըստ գոյություն ունեցող հուշարձանապահպանության տեսությունների, վերականգնման միջազգային կոնվենցիաների, խարտիաների սահմանման սկզբունքների և միջազգային փորձի գույաններին:

Գլխում անդրադարձ է կատարվել նաև վերականգնման համաշխարհային փորձին: Թեև, ուսումնասիրությունն հիմնականում ընդգրկում է Շիրազ քաղաքը և նրա շրջակայքը, սակայն գուգահեռների անցկացման էքսկուրսներում ընդգրկվել են միջազգային պահպանման այնպիսի օրինակներ, ինչպիսիք են Դամասկոսը, Ջաբիդը, Վիլնյուսը, Ֆեզը և այլն:

Հետազոտության շրջանակներում, առկա փաստաթղթերի, մատենագրերի ու պատմագիտական աղբյուրների միջոցով կարողացել ենք որոշ չափով բացահայտել և ուսումնասիրել Շիրազի պատմական քաղաքամասն ու ընդհանուր մշակութային ժառանգությունը ներկայացնելով ուսումնասիրության գործընթացին համապատասխան մոդել: Քաղաքի պատմական կենտրոնի ընտրությունը պայմանավորված է այն փաստով, որ հնարավոր է եղել օգտվել այդ հատվածներին վերաբերվող վավերագրերից, որոնց օգնությամբ կարելի է պլանավորել այդ կարևոր պատմական հուշարձանների պահպանությունը:

Շիրազ քաղաքի ֆիզիկական փոփոխությունների ընթացքի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ այն հիմնադրումից հետո ունեցել է տարածական ընդլայնման և ձևավորման բավականին բարդ գործընթացներ: Քաղաքի սկզբնական ձևավորումը տեղի է ունեցել մինչևյալամական շրջանում՝ արևելյան հատվածում (Բարմ Դելակի մոտակայքում) և շարունակվել մինչև հյուսիս և հյուսիս-արևելյան հատվածը, որը հանդիսանում է քաղաքի կառուցվածքի նախախլամական շրջանի հատվածը: Հիշյալ հատվածը ճանաչվում է որպես քաղաքի պատմական կենտրոն, որտեղ կենտրոնացված են ազգային և միջազգային նշանակության արժեքներ հանդիսացող ուշագրավ պատմամշակութային հուշարձաններ: Ներկայումս Շիրազ քաղաքի պատմական տարածքների զգալի մասը լիարժեք չի շահագործվում, և սա է պատճառը, որ այսօր այդ տարածքները բարոյապես ոչնչանում են: Ուստի անհրաժեշտություն է առաջանում դրանց պահպանությունը և կոնսերվացումը իրականացնել այնպես, որ միաժամանակ և՛ գործարանական, և՛ հորինվածքային առումներով դրանք ներգրավվեն քաղաքի ներքին կյանքում:

Ընդհանուր առմամբ վերականգնմանն ուղղված միջամտությունների հիմնական նպատակը պատմական ու կրոնական տարածքների և հուշարձանների պահպանությունն է՝ պահպանության և ժամանակակից օգտագործման ասպեկտների տեսանկյունից: Միաժամանակ, տարածական վերկառուցումների նախագծերը աշխարհում, կարող են խթանել այս կամ այն երկրի և տարածաշրջանի զվարճող զբոսաշրջային ուխտավայրերի պահպանությանն ու ժամանակակից օգտագործմանը: Դիտարկելով հրապարակի վրա առկա Շիրազ քաղաքի պատմական կենտրոնին առնչվող տարբեր նախագծերի հատկանիշներն ու հետազոտելով այն խթանիչ ուժերը, որոնք նպաստել ու նպաստում են դրանց առաջացմանը, կարելի է արձանագրել, որ այդ նախագծերի առաջացումը պայմանավորված է քաղաքի պատմական կենտրոնը վերածնելու ցանկությամբ (ռեվիտալիզացիայի) և քաղաքային միջավայրի որակի մտահոգությամբ, և որոնց հարուցած

հիմնախնդիրների հանդեպ դյուստրվում են տարբեր մոտեցումներ, քաղաքականություն և ռազմավարություն: Կարելի է ասել, որ նմանատիպ նախագծերում ձևավորվում են ռեվիտալիզացիայի նոր ու տարաբնույթ ծրագրեր, որոնք հիմնված են հիմնականում կենտրոնական կառավարության կողմից վերահսկվող և նախկին փորձառություններից քաղված դասերի վրա:

Հետևաբար, Շիրազի հին հատվածի վերականգնման համար համապատասխան մեթոդի որդեգրումը, չնայած տեսական վերլուծությունների, կանոնադրությունների և նմանատիպ փորձերի քննարկման անհրաժեշտությանը, պահանջում է հնարավորության գնահատում, արդյո՞ք վերլուծության արդյունքները գոյություն ունեցող բոլոր սահմանափակումներով և օժանդակություններով հանդերձ՝ Շիրազի ներկայիս իրավիճակի վերաբերյալ հաջողությամբ կիրականացվեն, թե՞ ոչ: Ուստի, հաշվի առնելով տեսաբանների գաղափարները, միջազգային կանոնադրությունները, ինչպես նաև ձեռք բերած միջազգային փորձը և դրանց արդյունքները, կարելի է այս առումով ճշգրիտ ընտրություն կատարել: Չնայած պատմական բոլոր անբարենպաստ իրադարձություններին, իսլամական Շիրազ քաղաքի հնագույն պատմական կենտրոնն այդ հանգամանքներում նվազագույն փոփոխություններ է կրել՝ քաղաքի վաղ ձևավորման ժամանակներից հանդիսանալով հանրային և կրոնական փոխազդեցությունների կենտրոն: Հետևաբար, քաղաքի միջուկի պարագայում համապատասխան քայլեր պետք է ձեռնարկվեն պաթոլոգիայի համատեքստում, ուղեցույցների սկզբունքներին համահունչ ու իրականացվող նախագծերի շրջանակներում, որը և՛ համադրաբար, այսինքն, ներառելով գործընթացների հերթականությունն ու նախապատվությունը և մթնոլորտի կերպարային միահնչությունը, ներդրվում է Շիրազի օրինակում:

Ռեվիտալիզացիայի համար քաղաքի պատմական կենտրոնը պետք է ենթարկվի հետևյալ վերականգնման քայլերին, դիրեկտիվներին և ծրագրերի իրականացմանը, այն պետք է լուծի քաղաքի էկոլոգիական պատկերի, հասարակա-ժողովրդագրական, սոցիալական ու բնակչության բարձր խտության հիմնախնդիրները, մշակութային վիճակի բարելավումը, տնտեսական հիմնախնդիրն ու ֆինանսական ներդրման պակասը, անվտանգության և պաշտպանության հիմնախնդիրները, հարմարությունների ու ենթակառուցվածքների հարցերը և այլն: Ղեկավարման տեսակետից այստեղ բացակայում են բազմակողմանի ծրագրերն ու կանոնները՝ արժեքավոր հատվածների ռեվիտալիզացիայի համար, որոնք պետք է ապահովել: Եվ, քանի որ իսլամական քաղաքի և դրա բոլոր բաղադրիչների կյանքը սկսվում է հենց քաղաքի պատմական կենտրոնից, նրա ռեվիտալիզացիան կարող է սկսվել հենց այս վայրից:

Միաժամանակ իրավական և օրենսդրական տեսանկյունից գործող օրենքները շատ անիրական են, ուստի որոշ սկզբունքներ և օրենսդրություններ, կապված կառուցվածքային պլանավորման և քաղաքաշինության հետ, չեն համապատասխանում տարածքային տվյալներին, հետևաբար շատ հաճախ այդ սկզբունքները խախտվում են: Ֆիզիկական խնդիրների տեսանկյունից տեղի է

ունենում շինությունների, ինչպես նաև պատմական կառույցների լայնամասշտաբ էրոզիա և ժանգոտում: Չկա ծրագրված և սահմանված կադապար պատմական կառույցների կառուցվածքը բարելավելու համար:

Այսպիսով, տարածքում խնդիրների բնորոշումից, այդ խնդիրների համար ծրագրերի քննարկումից ու վերլուծությունից հետո համապատասխանեցվել են նպատակները, ընդունվել են ուղեցույցները թույլատրվող գործնական աշխատանքները բնորոշելու համար: Ղեռավելին, այս ուղեցույցների հիման վրա սահմանվել են սոցիալական, մշակութային, տնտեսական ու ֆիզիկական յուրաքանչյուր ոլորտի թույլատրվող գործունեությունները: Այս ամենը նպաստում է ռեվիտալիզացիոն ծրագրին: Հաշվի առնելով մեր ուսումնասիրության տարածքը Շիրազի պատմական կենտրոնի հատվածը, ապա թույլատրվող գործունեության համապատասխան մոտեցումներն ընդունելուց հետո և ներկայացնելով պահանջվող ծրագրերը՝ առաջարկվել են տարածական ու կառուցվածքային լուծումներ: Ներկայացված ամենակարևոր ծրագրերից են արժեքավոր տարրերի հաստատման, վերակառուցման և վերագնահատման ծրագրերը, երթուղիային խնդիրների լուծումը, ավտոկայանատեղիների նախատեսումը, ռեվիտալիզացիոն կանոնների ներկայացումը, ինչպես նաև ճարտարապետական նախագիծը սահմանված շրջանում թույլատրվող ռեվիտալիզացիոն գործնական լուծումների վերաբերյալ:

Անշուշտ, պատմամշակութային արժեք ներկայացնող հուշարձանների կոնսերվացման ու պահպանության վերոհիշյալ միջոցառումները նոր շունչ կհաղորդեն Շիրազ քաղաքի պատմական կենտրոնին, որն իր հերթին պետք է համապատասխանի համաշխարհային ժառանգության և պահպանության որոշումներին, ինչպես նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ի կոնվենցիաներին և ընդունված պահպանման չափանիշներին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կատարված ուսումնասիրության տվյալներով կարելի է եզրակացնել, որ Շիրազի «Բեյնոլ Հարամեյն» քաղաքամասի վերակառուցումը միջազգային յուրահատուկ օրինակ է: Նրա վերակառուցումը պետք է իրականացնել քաղաքային կենտրոնների ռեվիտալիզացիոն սկզբունքով, որ բնագավառի ղեկնատրուկտիվիստական իմաստասիրությամբ առաջին մեծամասշտաբ կիրառությունն է աշխարհում:

1. Քաղաքաշինականորեն Շիրազ քաղաքը բնականոն ձևավորված բնակավայր է, որ կազմավորվել է Երանի պատմության տարբեր ժամանակաշրջաններում և ունեցել է զանազան յուրահատուկ ճարտարապետական փոխազդեցություններ: Քաղաքամասը փոխնուղղահայց փողոցների ցանցկեն հորինվածքով կառուցապատում է, որը համադրում է հին բնակելի թաղամասերն ու բնակավայրի առևտրահասարակական կառույցները: Այն հատակագծային-

տարածական կառուցվածքով ամֆիլադ է, որտեղ ամֆիլադի յուրաքանչյուր տարրը առաջադրում է իրանյան մշակույթի ուրույն շերտ և կերպար:

2. «Բեյնոլ Հարամեյն» քաղաքամասի կառուցապատումը ներառում է կանոնավոր և բնականոն կամ ազատ հատակագծումով հրապարակներ, առևտրական ու արհեստավորական միջնադարյան մասնագիտացված նրբանցքներ և բակերի շուրջ ողկույզավորված բնակելի խմբեր: Դրանք կառուցապատված լինելով տարբեր մշակութային երանգներով, հուշարձանապահպանության տեսակետից պահանջում են իրարից դիֆերենցված մթնոլորտի ստեղծում, որը և պահանջում է ռեվիտալիզացիոն (կերպարային վերագարթոնքի) մոտեցում:

3. Կարևոր հանգամանք է, որ ակնարկվող բազմազան ենթագոտիների գոյությունը միջնադարյան քաղաքաշինության հատակագծման իրանյան յուրահատկություն է, որտեղ նրանցից ամեն մեկն ունի օրինաչափ բովանդակություն, կազմված սրբավայրից, մեմորիալից, բնակելի տներից, շարքերից և սպասարկող ենթակառուցվածքներից: Առաջադրվող վերակառուցման կերպարային դոմինանտը սրբավայրն է, իսկ հորինվածքի կենտրոնը՝ հրապարակների կամ նրբանցքների (անցումների) հաջորդակառույցները: Վերջիններին ենթարկվում են միջավայրի մյուս տարրերի ձևակերպումը կամ կառուցապատման ենթատեքստի ստեղծումը: Սա է, որ կոչվում է կենտրոնի վերակառուցման պարթոլոգիա:

4. «Բեյնոլ Հարամեյն» քաղաքամասի վերակառուցման ռեվիտալիզացիան բաժանվել է տասներկու ենթագոտիների, որոնցից յուրաքանչյուրը հուշարձանապահպանության տեսակետից օրինաչափորեն իրականացվում են ձևաչափային չորսը մակարդակներով: Առաջին մակարդակում ընդգրկվել են սրբավայրերը, որոնք բացարձակ անձեռնմխելի են և ունեն ժամանակակից օգտագործում: Երկրորդ մակարդակում այն աշխարհիկ հուշարձաններն են, որոնք արտաքին ձևում անձեռնմխելի լինելով հանդերձ, ներքին տարածություններով ադապտացվում են ըստ ժամանակակից ֆունկցիաների: Երրորդ մակարդակի կառույցների դեպքում թույլատրվում է նրանց արտաքին ու ներքին դիզայնի բնական մշակումը՝ ենթարկվելով ռեվիտալիզացիոն սահմանափակումների: Չորրորդ մակարդակը դա պահպանության ենթակա տարածքների չօգտագործված մասերն են, որոնք ենթակա են ժամանակակից միջավայրի պահանջներին:

5. Շիրազի ռեվիտալիզացիայի և թանգարանացման համար անհրաժեշտ է ցուցադրական երթուղու կազմակերպում, տարածքի գոտեորումը սպասարկող և սպասարկվող ստորաբաժանումների, գոտիների տեսակավորումն ու ավելացվող ենթակառուցվածքային տարրերի տեղաբաշխումը: Հաշվի առնելով Շիրազի ներուժը՝ կարևորվում է բաց երկնքի տակ ճարտարապետական և պատմամշակութային արժեքների ստեղծման գաղափարը, որը կընդգրկի քաղաքը շրջապատող միջավայրը: Տարածքի թանգարանային հարմարագույն այցելության երթուղու կազմակերպումը կարելի է կատարել հիմնվելով գոյություն ունեցող ճանապարհային ցանցի վրա:

ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ՉԻՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ԵՆ ՀԵՏԵՎՅԱԼ
ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ

1. Ղոյինեժադ Փիրբազարի, Ա., Քաղաքային վերանորոգումը Շիրազի պատմական հատվածում, Գոգարեշ, N 46-47, Թեհրան, 2005, էջ 14-19
2. Ղոյինեժադ Փիրբազարի, Ա., Planning and architectural features of Shiraz old texture //ՃՀԱՀ-ի գիտ. աշխատությունների ժողովածու 1(29), Երևան, 2006, էջ 149-151
3. Ղոյինեժադ Փիրբազարի, Ա., The historical development of the core zone in Shiraz and its main buildings// ԵՃՀՊՀ-ի գիտ. աշխատ. ժողովածու 1(29), Երևան, 2006, էջ 152-154
4. Ղոյինեժադ Փիրբազարի, Ա., Նահավանդի, Ս. Մ., Historical city as a "City museum"// ԵՃՀՊՀ-ի գիտ. աշխատ. ժողովածու 2(28), Երևան, 2006, էջ 141-144
5. Ղոյինեժադ Փիրբազարի, Ա., Նահավանդի, Ս. Մ., Historical city renovation methods (Iran historical city)//ԵՃՀՊՀ-ի գիտ. աշխատությունների ժողովածու 2(28), Երևան, 2006, էջ 145-151
6. Ղոյինեժադ Փիրբազարի, Ա., Իրանի Շիրազի քաղաքային տնտեսության կառուցապատման և կառավարման պատմա-մշակութային խնդիրները՝ մզկիթների, շուկաների, քարավանատների օրինակով//Այլընտրանք գիտական հանդես, հունվար-մարտ, Երևան, 2017, էջ 351-354
7. Ղոյինեժադ Փիրբազարի, Ա., Շիրազ քաղաքի պատմական կենտրոնի(Բեյնոլ Հարամեն) քաղաքային պարզոլդիան և ռեվիտալիզացիան//Կանթեդ, 1(70), <<Ասողիկ>> հրատ., Երևան, 2017, էջ 228-234
8. Ղոյինեժադ Փիրբազարի, Ա., Շիրազ քաղաքի հնագույն պատմական հատվածի վերականգնման, պահպանման ու նորացման հնարավոր ուղիներն ու անհրաժեշտ միջոցառումները //Կանթեդ, 1(70), <<Ասողիկ>> հրատ., Երևան, 2017, էջ 235-241
9. Ղոյինեժադ Փիրբազարի, Ա., Formation and the historical development of the city Shiraz in the ancient and medieval ages// ՀՀ սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները գիտական հոդվածների ժողովածու 1(24), Երևան, 2017, P.440-443
10. Gholinejad Pirbazari, A., Structural transformation of Shiraz 95-138, European Online journal of Natural and social sciences: proceedings, vol.5, No 3(s), 2016, P.234-250
11. Ղոյինեժադ Փիրբազարի, Ա., Շիրազ քաղաքի պատմական ակնարկն ու պատմական զարգացման ընթացքը, Թեհրան, «Հաֆթ Ասեման» հրատ., 2008, էջ 88
12. Ղոյինեժադ Փիրբազարի, Ա., Հայելչագործական աշխատանքներ, Թեհրան, «Հաֆթ Ասեման» հրատ., 2008, էջ 58
13. Ղոյինեժադ Փիրբազարի, Ա., Շիրազ քաղաքի մզկիթները, Թեհրան, «Հաֆթ Ասեման» հրատ., 2008, էջ 169
14. Ղոյինեժադ Փիրբազարի, Ա., Պատմական հատվածների ընդհանուր չափորոշիչները, Թեհրան, «Հաֆթ Ասեման» հրատ., 2008

ГОЛИНЕЖАД ПИРБАЗАРИ АЛИРЕЗА-ХАСАН
ЧАСТЬ ГОРОДА "МЕЖДУ ДВУМЯ МЕЧЕТЯМИ" СТАРОГО ШИРАЗА И
АСПЕКТЫ ЕГО СОХРАНЕНИЯ И СОВРЕМЕННОГО ИСПОЛЬЗОВАНИЯ

РЕЗЮМЕ

Рассматриваемая в диссертации древнейшая историческая область Шираза является одной из основ культурно-исторического, в частности, историко-архитектурного и градостроительного наследия. Историческая часть, находящаяся в центре исламского города, датируется X-XIX вв. Древнейшая область включает центр города и прилегающие кварталы, образование которых относится к доисламскому и исламскому периоду истории города Шираз. Городской район богат историческими памятниками, которые сегодня нуждаются в градостроительной, экологической и архитектурной перестройке и модернизации. Сегодня крайне необходимо разработать мероприятия, обеспечивающие сохранность культурно-исторического ядра центра города Шираз. Фактически нельзя откладывать документально-исследовательское изучение центра города, сохранение и модернизацию существующих построек либо путем гомогенизации образной архитектурной среды, регулирования технических и эстетических проблем, либо иными подходами. Вышеупомянутые меры по консервации и охране памятников, представляющих культурно-историческую ценность, дадут новое дыхание историческому центру города Шираз, что в свою очередь должно соответствовать решениям сохранения всемирного наследия, а также конвенциям и критериям охраны, принятым ЮНЕСКО. Новшеством работы является рассмотрение вышеупомянутых реалий в свете этих деклараций. Следовательно, произойдет оптимизация исторического центра города Шираз, принимаемая во внимание последующее его развитие.

Начиная с 1960-ых по сей день национальные и интернациональные движения по сохранению исторического наследия акцентируют принципы и методы презервации историко-архитектурных памятников. Основным принципом такого отношения является обозначение различных взглядов ученых и компетентных органов по этим вопросам, которое в конечном счете приведет к разработке и принятию соответствующих национальных и международных законов и правил по сохранению памятников. Значимость исторических зданий и исторических центров города Шираз может быть принята, исходя из разных перспектив. Например, перспективой может быть определение исторического значения и ценности данных объектов, на основе чего могут быть выработаны стратегия и механизмы по их сохранению. Так, одним из важнейших аспектов исторического строения может быть гармоничное сосуществование данного здания с окружающей средой. В настоящее время существенная часть исторических районов города Шираз не используется в полной мере, следовательно, возникает необходимость их консервацию и охрану проводить так, чтобы они были вовлечены во внутреннюю жизнь города одновременно и в практическом, и в композиционном аспектах. Исторические черты города Шираз предоставляют возможность для развития туризма. Такой подход к городу может сохранить данное поселение, которое имеет этнографическую и архитектурную значимость. Фактически, сохранение исторических поселений со всеми архитектурными и городскими объектами и их ревитализация и превращение в музей может быть необходимо в туристическом контексте. Таким образом, сохранение историко-культурного пласта города Шираз кроме превращения в музей, может стать разнообразной программой, включающей в себя историко-археологический,

этнографический, историко-урбанизационный, демографический и ревитализационный аспекты. Следовательно, сегодня архитектурное исследование и презервация поселений является необходимостью, что и определяет актуальность.

Целью работы является изучение, сохранение и ревитализация "Бейнол Харамейн"- исторического центра города Шираз, то есть градостроительная и архитектурная комплексная реконструкция центра с учетом экологической целостности зданий, построенных в разное время. Предложить пути ревитализации исторических построек и способы их применения. Научная новизна исследования состоит в том, что впервые осуществляется изучение градостроительного состояния исторического центра города Шираз, составление заключения и проведение работы с памятниками. В связи с методом работы в диссертации исторические памятники были проанализированы с точки зрения современного использования и исторического толкования.

Исследование было проведено по историческому методу, а также в согласовании с иными примерами охраны памятников. В сущности, оба метода переплетаются логически аргументационными принципами. Для обработки темы осуществлялись историко-рукописные изучения архивных документов и фотографий, проектов, а также полевые исследования. Таким образом, представляется необходимость реконструкции "Бейнол Харамейн"- исторического центра города Шираз и в градостроительном, и в архитектурном, и в техническом, и в этнографическом и археологическом аспектах. В исследовании рассматриваются особенности географического расположения и градостроения города Шираз, сооружения и памятники исторического центра, представляются патология и перестройка исторического центра города Шираз.

В заключении работы делается вывод, что сохранение исторического центра города Шираз является комплексом взаимосвязанных архитектурных процессов, включающим следующие меры: документально-исследовательское изучение местности и его обобщение в контексте архитектуры окружающей градостроительной среды, координация памятников, обеспечение их долговечности, подразделение по функциональной значимости и обращение в музей. Ревитализация исторического центра города Шираз должна обеспечить решение следующих общих проблем: экологических, социально-демографических, культурных, возможности экономического обеспечения и управления, сохранения правовых, юридических и физических образований. По существу, вышеупомянутые проблемы являются центром притяжения социальной, религиозной и идеологической деятельности, которые в настоящее время могут быть центром сохранения и ревитализации ценностей культурного наследия в исторической структуре города в целом. Выбор каждого процесса основан на особенностях, характерных элементам, относящимся к практике, поэтому, каждое решение об исторических элементах должно осуществляться в виде перестроечных и ревитализационных программ, которые должны быть проверены и внедрены в форме практической работы их утверждения.

Представленное исследование необходимо всем государственным и частным инстанциям, занимающимся городом Шираз. Результаты исследования можно внедрять в области стандартизации и законодательства, в процесс проектирования, а также в теорию и историю архитектуры, в процесс восстановления памятников.

GHOLINEJAD PIRBAZARI ALIREZA – HASAN ASPECTS OF MODERN USAGE AND PRESERVATION OF OLD CITY FABRIC "BETWEEN TWO MOSQUES" IN OLD SHIRAZ

SUMMARY

The oldest historical fabric of Shiraz which is at the core of the thesis is one of the hinted sources of historical-cultural, mainly of historical-architectural and urban construction heritage. The historical texture of the Islamic city dates to X-XIX centuries. The ancient part involves the city center and its nearby districts the formation of which belongs to the pre Islamic and Islamic periods of the history of Shiraz. The city fabric is rich with historical monuments, which today have the need of urban, environmental and architectural reconstruction and modernization.

Today the cultivation of measures for protecting the historical-cultural core of the central fabric of the city Shiraz is an imperative. In fact, the analytical study of the urban center, the preservation and modernization of the existing constructions is urgent be it from the perspective of image homogenization of architectural environment and of problems dealing with technical and aesthetic regulations or from any other points. The conservation and protection concerning the historical-cultural value will give a new soul to the historical center of the city Shiraz, which in its turn, must conform to the decisions of protection and worldwide heritage, as well as, to the conventions of UNESCO and accepted standards. Actually the novelty of the thesis is expressed under the light of the above mentioned declarations. Afterwards it is enshrined in the optimization of the historical center of the city Shiraz by taking into considerations the prospects of its development.

Since 1960 and until nowadays the national and international movements for protecting historical cities are emphasizing the principals and methods of protecting historical-architectural monuments. The starting point in this attitude is the designation of viewpoints by the scientists and competent bodies after which the adoption of national and international laws for the protection of monuments and the cultivation of corresponding regulation rules is carried out. The importance of historical buildings in the historical center of the city Shiraz can be accepted from different perspectives, for instance, from the perspective of defining their historical meaning and value on the basis of which it will be possible to suggest the strategy and implementation mechanisms for their protection. One of the most important features of historical buildings is their coherent and harmonious link with the surrounding environment.

At present the vast historical areas of the city Shiraz are not fully operated and that is the reason for their moral destruction. Thus, there occurs the need for implementing their protection and conservation, so that they will be simultaneously included in the inner life of the city both from functional and creative perspective. According to its features the historical part of the city Shiraz is a resource for tourism. Such a measure today will save the settlement, which has ethnographical and architectural values, from disappearing. In fact, in the context of tourism programs of the

area the protection of historical settlement with all its architectural and urban measures, its revitalization and turning into museums is a necessity. Thus, the protection of the historical-cultural texture of the city Shiraz, besides its turning into a museum, is diversified program, which involves historical-archeological, ethnographical, popular residential architectural, historical urban, environmental aesthetic organization and revitalization and other specialized spheres. Respectively, today the architectural study and preservation of the settlement is an imperative necessity and which is the objective of this thesis.

The goal of the thesis is the "Beynol Haremein" city fabric's preservation and revitalization, that is the complex urban and architectural reconstruction of the center by simultaneously taking into account the unity of the environment full of buildings constructed at various periods. It is necessary to suggest the revitalization methods for historical constructions and point the means of their implementation. The subject of the study includes the architectural landscape of the city Shiraz, urban and environmental study, preservation and revitalization of historical-cultural buildings including residential, religious, public, memorial, trade and industrial buildings.

The scientific novelty of the study is notable as for the first time the thesis methodically documented and analyzed the historical construction of the city Shiraz based on the provisions of scientific research and design, the all monuments are listed and systemized, their pathology, conservation and revitalization measures are formulated. The documentation of the existing monuments is carried out. Standards for making decisions on revitalization and interference stages are suggested. For the first time the exploration of urban conditions of the city Shiraz is exercised and the comprising and implementation of conclusions concerning interference in monuments is done.

In the thesis the historical monuments are analyzed from the perspective of contemporary usage and historical interpretation. The research is carried out by the historical method, as well as, through the comparison of examples of the modern protection of monuments.

In conclusions it is shown that the reconstruction of Shiraz's "Baynol Haramain" old city fabric is a unique international sample. Its reconstruction must be carried out due to urban center's revitalization principal which is the first large-scale application of the field by deconstructive sophistication in the world. The presented study is necessary for all official and private organizations dealing with the city Shiraz, as well as, for the investigators of this theme.

The results of the study may be invested in the fields of standardization and legislation, in designing processes, as well as, in the theory of architecture and history and in the monument reconstruction functions.

Cuu

ՀՀ Ազգային գրադարան



NL0927698

